ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(ծննդյան 75-ամյակի առթիվ)

Ականավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը բոլորեց իր ծննդյան 75-ամյակը:

Ճանաչված գիտնականը ծնվել է 1927թ. մարտի 10-ին, Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), կարնեցի ծնողների ընտանիքում: Միջնակարգն ավարտել է 1944թ. և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ՝ այն ավարտելով 1949թ.: Նույն տարվանից աշխատել է նախ կոմերիտական, ապա կուսակցական կառույցներում: 1954թ. Հ.Ավետիսյանը անցնում է աշխատանքային նոր բնագավառ՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիա, որտեղից էլ պետք է սկիզբ առներ նրա աշխատանքային գործունեության նոր, արդյասաբեր ուղին: Մինչև 1979թ. նա աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ նախագահության գիտական քարտուղար, նախագահության գլխավոր քարտուղարի տեղակալ՝ վերջին պաշտոնը համատեղելով ակադեմիայի գիտական կադրերի պատրաստման խորհրդի նախագահի պարտականությանը: 1960թ. նա պաշտպանում է թեկնածուական, իսկ 1966թ.՝ դոկտորական ատենախոսություններ՝ նվիրված մեր պատմական ոչ վաղ անցյալի երիտասարդական ու հասարակական-քաղաքական շարժումներին: 1979թ. Հ.Ավետիսյանը ստանձնում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը՝ ամբողջովին նվիրվելով հայ ժողովրդի նորագույն պատմության բազմաթալ հիմնահարցերի ուսումնասիրությանը և, մյուս կողմից, իր գիտակազմակերպչական կարելիությունները ի սպաս դնելով Պատմության ինստիտուտի նպատակասլաց ու արդյունավետ գործունեությանը: Նրա տնօրինության ժամանակ ՀՀ ԳԱ համակարգում պատմագիտությունն ապրեց որոշակի վերելք՝ մշակելով բազում հիմնահարցեր, որոք լուրջ հետաքրքրություններ էին առաջացնում Հայաստանում և սփյուռքում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, 1990-ական թթ. Հ.Ավետիսյանի գլխավորած ինստիտուտը, չնայած բազմաթիվ դժվարություններին ու դրկանքներին, զարմանալիորեն պահպանեց իր գիտական ներուժը, ինչպես և հմայքը գիտական աշխատանքի ձգտող երիտասարդության համար: Ներկայումս Պատմության ինստիտուտում աշխատում են ութ ակադեմիկոս, գիտության 24 դոկտոր, 51 թեկնածու: Այստեղ իրենց գիտական առաջին քայլերն արեցին ավելի քան երկու տասնյակ ասպիրանտներ ու հայցողներ:

Հ.Ավետիսյանը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը գլխավորեց մինչև 2002թ.: Նույն թվականին, հաշվի առնելով իր գիտակազմակերպչական արդյունավետ գործունեությունը և աշխատանքային մեծ փորձն այս բնագավառում,

նա առաջադրվեց ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս թեկնածու:

Հ.Ավետիսյանի գիտական հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն արդի հայ պատմագիտության համար: Նա գրել է 80-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում՝ 16 մենագրություն: Նրա ուսումնասիրությունների թեման հիմնականում 1918 – 1920թթ. պատմության բարդ ու կնճռոտ հարցերն են՝ սկսած Անդրկովկասում երիտասարդական-հեղափոխական շարժումներից մինչև Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծման ու զարգացման հիմնահարցերը: 1960-ական թվականներից սկսած՝ իր ռուսերեն և հայերեն հրատարակած աշխատություններում Հ.Ավետիսյանը նորահայտ փաստաթղթերով ու նորովի գնահատականներով ամբողջացրել է Անդրկովկասի երիտասարդական ու հեղափոխական շարժումների պատմությունը, վերհանել մինչ այդ մոռացության մատնված բազմաթիվ գործիչների ու մասնակիցների: Այդ աշխատությունները ժամանակին բարձր գնահատվեցին հանրապետությունում և ամբողջ երկրում:

Արցախի ազատագրական շարժման ծավալման շրջանում (1988թ.) Հ.Ավետիսյանը սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հոդվածներ հրատարակեց 1918 – 1920թթ. Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների և Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու մասին: Գիտնականը ողջունեց արցախյան շարժումը և դատապարտեց Ղարաբաղի հարցում թույլ տված սխալներն ու կամայականությունները: 1993թ., երբ Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը գտնվում էր քաղաքական ու տնտեսական ծանր ճգնաժամի մեջ, Հ.Ավետիսյանը ռուսերեն լեզվով լույս ընծայեց «Բրեստ-Լիտովսկ. ինչպես բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Իաթումը» այժմեական և ուշագրավ աշխատությունը, ուր նորահայտ արխիվային փաստաթղթերով բնութագրում է ժամանակի քաղաքական իրադարձությունները և այդ հենքի վրա՝ բանակցությունների ընթացքն ու արդյունքները: Այս աշխատության մեջ առաջին անգամ հանգամանորեն քննարկվում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հայերի համար ստեղծված ծանր կացության խնդիրները: Հիզինակի եզրահանգումները կարևոր ներդրում են նորագույն շրջանի հայ պատմագիտության մեջ:

1918 – 1920թթ. Անդրկովկասի և Հայաստանի քաղաքական իրականության նկատմամբ Հ.Ավետիսյանի հետաքրքրությունների և Մոսկվայի, Բուդապեշտի, Վիեննայի արխիվների նորահայտ փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա դրանց գիտական իրացման արդյունքը եղավ «Հայկական հարցը 1918թ.» ծավալուն մենագրությունը (1997թ.): Այս աշխատությունը հայ ժողովրդի պատմության կարճ, բայց բեկումնային մի ժամանակաշրջանի գիտական վերարտադրությունն է՝ գրված պատմաբանի քննախույզ և խորաթափանց հայեցվածքով: Դա Հայաստանի Առաջին հանրապետության լինելության ու գործունեության, նրա ներքին և մասնավորապես արտաքին քաղաքական կացության հանգամանալի պատմությունն է, իր նշանակությամբ ճակատագրական՝ հայ ժողովրդի և Հայկական հարցի համար: Փաստական վիթխարի նյութը նրան հնարավորություն է ընձեռել բացահայտել արևմտյան տերությունների և Ռուսաստանի, մյուս կողմից, Անտանտի երկրների ու սրանց հակառակորդ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի ու Թուրքիայի հակամարտությունները: Հ.Ավետիսյանը քայլ առ քայլ ի հայտ է բերում աշխարհաքաղաքական հորձանուտի մեջ ներքաշված Հայաստանին առնչվող քաղաքական ու դիվանագիտական բազմաթիվ, ոչ սակավ դեպքերում՝ առաջին անգամ շոշափվող իրողություններ: Հ.Ավետիսյանը ստեղծել է ամբողջական մի գործ, և այս իսկ սահմաններում բավականաչափ հստակորեն ուրվագծվում են 1918թ. հետո սպասվող միջազգային

քաղաքականության այն վայրիվերումները, որոնք Հայկական հարցը պետք է տաններ փակուղի:

1998թ. Երևանում լույս տեսավ Հ.Ավետիսյանի «Հայոց ազգային միասնության հայթհայթակը» գիրքը՝ նվիրված 1918թ. մայիսյան հերոսամարտերին, հայերի ազգային միասնության մեջ նրանց ունեցած խոշոր նշանակությանը: Հայաստանի Առաջին Հանրապետությունը, ինչպես համոզում է հեղինակը, հռչակվեց ոչ թե ցասարի հոգածության, այլ հայ ժողովրդի միասնական կամքով: Այդ գրքին հետևած «Հայոց պատմություն» (2000թ.) աշխատության մեջ (Էդ.Դանիելյանի և Ա.Մկրտչյանի հեղինակակցությամբ), Հ.Ավետիսյանը առաջ է քաշել հիմնահարցեր, որոնք ծրագրային նշանակություն կունենան հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման գործում:

Հ.Ավետիսյանի դիմանկարի բնութագրական կողմերից է նրա գիտամանկավարժական գործունեությունը: Տասնյակ տարիներ ի վեր նա դասավանդում է Երևանի պետական համալսարանում, հոգածությամբ իր մասնակցությունը բերում հանրապետության երիտասարդ պատմաբանների կայացմանը, ղեկավարում ասպիրանտների ընթացքը դեպի հասուն գիտություն:

Հ.Ավետիսյանը գործուն մասնակցություն է ցուցաբերում ՀՀ և նրա սահմաններից դուրս կազմակերպվող հայագիտական համաժողովներին (Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա և այլուր): Լոնդոնում՝ անգլերեն, Մոսկվայում և Թբիլիսիում՝ ռուսերեն լեզուներով 1999 և 2000թթ. լույս տեսավ Հ.Ավետիսյանի «Կովկասյան տունը և համաթրքության նկրտումների հարցի շուրջ» աշխատությունը, որը ներկայացնում է հիմնահարցի նորովի վերլուծությունը: Ամենուրեք, որտեղ էլ հանդես գա Հ.Ավետիսյանը, ըստ արժանվույն և գիտական բարձր որակներով է ներկայացնում հայրենի հայագիտությունը, հայ պատմաբանների արդի գլխավոր բնութագրական կողմերը: Մեծ է Հ.Ավետիսյանի վաստակը գլխավոր դասագրքերի ստեղծման գործում: Հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանների շատ հիմնահարցեր նորովի և արդիական մեկնաբանություն են ստացել նրա շարադրանքներում:

Տակավին շատ գործեր ունի անկու յոթ և կես տասնամյակը բոլորած, անապատ նստնդով լեցուն գինակաները, որի վկայությունը նորանոր ծրագրերն են, դրանք իրագործելու կամքը և նվիրումը հայ ժողովրդի պատմությանը:

Տպագրության ընթացքի մեջ է նրա «Հայերը 1918թ. Բաքվի պաշտպանությունում» աշխատությունը, որտեղ հիմնավորապես ապացուցվում է այդ պաշտպանության պատմության՝ ազրբեջանական կեղծարարների քարոզչության ողջ մանկությունը: Հրատարակության է պատրաստվում Հ.Ավետիսյանի «Ռուսական բանակի հայ գեներալներ (1730 – 1917) ծավալուն աշխատությունը: Այստեղ ընդգրկված են 150-ից ավելի հայ գեներալներ, այդ թվում՝ Վ.Բեհբութովը, Զ.Արղությանը, Մ.Լորիս-Մելիքյանը, Դ.Լազարյանը և ուրիշներ:

Պատմական գիտությունների դոկտորներ
Գ.Մ.ԳԵՂԱՄՅԱՆ, Ա.Ա.ԽԱՌԱՏՅԱՆ

Խմբագրության կողմից. «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունը և խմբագրական կոլեգիան ջերմ շնորհավորանքներ են հղում ակադեմիկոս Հ.Ավետիսյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ և մաղթում երկար տարիների կյանք, նորանոր խոր ակոսներ՝ գիտական հետազոտությունների անդաստանում: